



ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ղր. 45  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
Վ.ՆՑԱՄՍԵԱՅ 25

Ֆր. 8  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
Վ.ՆՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՈՒԿ Է

ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԵԿԱՆ ԲՊԼ. 6

# ՓԻԻՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 16 ՆՈՅՆՄԱՐԵՐ 1901

ԹԻԻ 27

## ԲՈՍԵ ՎԵՐՊԱԼ

Կը ցաւիմք որ, հակառակ մեր այն-  
քան երկայնամտութեան, մինչեւ որոշեալ  
պայմանաժամը, չ'երեցաւ տեղական  
քերթի մը մէջ Գ. ԷՃԷՆՏԻ Չարու-  
եանի ստայոյ նամակին հերժումը Տիար  
Պերն Օհանեանի կողմէն, որ սակայն  
իւր պաշտօնը պիտեսպանելու համար մե-  
նամարտի հրատարակ էր Տ. Եղ. Թուր-  
չուհեանը: Չարմանալի չէ՞ որ իւր պաշտ-  
իւն համար կեանքը վստանգելու փորձող  
երթասարդ մը՝ քերական բացարձակ  
սուտ մը հերժելու սարրական պարսա-  
կանութեան մը հանդէպ եւ ստիպել խըմ-  
բագրութիւնս ակամայ հրատարակելու  
Բոսե Վերայիլին պատճէմը, որ է հե-  
տեւեալը.

L'an mil huit cent quatre vingt dix-huit  
(1898) le treize (13) Décembre à Alexandrie  
aux Bureaux de M. M. A. Mantachoff  
et Cie.

A la suite d'une discussion intervenue  
au sein du Conseil d'Administration de la  
Société de Bienfaisance Arménienne, le Sr.  
Berdj Ohanian s'étant trouvé insulté par le

Sr. Edouard Tourchoudjian, a chargé les  
Srs. le Dr. M. Jamgotch et le Me. M. La-  
kah, Soussignés, de demander à ce dernier  
une rétractation ou une réparation par les  
armes.

Le dit Sr. Edouard Tourchoudjian a de  
son coté chargé les Srs. J. Moutasoff et A.  
Khardiache, Soussignés, de se mettre en com-  
munication avec les dits Sieurs.

Les dits Srs. J. Moutasoff et A. Khar-  
diache ont fait connaître que le malentendu  
survenu au sein du Conseil étant éclairci, à  
savoir que le Sr. Berdj Ohanian ayant dé-  
claré franchement et loyalement que les paroles  
offensantes proférées par lui dans l'ardeur de  
la discussion ne s'adressaient nullement à la  
généralité des membres présents, mais à une  
personne déterminée, le Sr. E. Tourchoudjian  
prenant en considération les dites explications,  
exprime ses regrets pour les paroles offensantes  
par lui adressées au Sr. B. Ohanian et les  
retire purement et simplement.

En foi de quoi le présent procès verbal a  
été dressé en double exemplaire.


Signé

Dr. M. Jamgotch,  
M. Lakah

J. Moutasoff  
A. Khardiache

### ՅԱԽԵԼՈՒԱԾԻՆ ԱՌԹԻԻ

ԽՕՍԲ Մ՛ԱԼ ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԽԵՂԱԹԻՒՐՈՂՆԵՐՈՒՆ



(Շար. ԻՅ. քիւեկն եւ վերջ)

Ինչպէս որ յօգուածիս առաջին մասին մէջ տեսանք, երկու *sof* իւնանները, այսինքն նախորդ Խորհրդի վերջին նասին Ասեկնագրութիւնը և Վսեմ. Կ. Բէիզեան պէյի ստորագրութեամբ հռչակաւոր պաշտօնագիրը, բաւական են վէճի տակ ինկած խնդիրը մի անգամ ընդ միշտ պարզելու և լուսաբանելու համար: Ասեկնագրութիւնը նախորդ Խորհրդին լուծման վիճակը կը դնէ մեր աչքին առջև և միանգամայն Վսեմ. Փաշային յայտարարութիւնը թէ՛ «իրե՛ն կը վերապահէ այն միջոցները որոնց դիմելու հարկին մէջ պիտի գրանուի որպէս զի ազգային գործերը չի վնասուիլն այս վիճակէն.» իսկ Վսեմ. Բէիզեան պէյի պաշտօնական նամակը կը պարզէ թէ Վսեմ. Փաշային ակնարկած միջոցը ո՛չ այլ ինչ էր բայց միայն *ևոր Թաղ. Խորհրդի մը կազմութիւնը՝ առժամեայ հանգամանակով*: Տօքիւմանները, երկուքն ալ հարազատ, երկուքն ալ պաշտօնական, (ու Տ. Մըկըրտիչեանի գրով ու շարագրութեամբ) իրարու լրացուցիչն են. մէկին պակաս թողածը միւսը կամբողջացնէ: Ճշմարտութեան անկեղծ օրէն հետամուտ ո և է անձ երբ կարգայ թուականի կարգով՝ նախ Ատենագրութիւնը և անոր ետեւէն՝ պաշտօնագիրը, ամբողջ իրողութեան կատարելապէս տեղեակ կը դառնայ, ու կը զարմանայ թէ ի՞նչպէս այս յայտնի իրողութեան հակառակը պնդողներ կրնան գտնուիլ: Այդ վկայաթուղթերը կարգաւէ վերջն ալ արդի Թաղ. Խորհուրդը նախորդին շարունակութիւնը և հետեւապէս ժողովրդէն ընտրուած ներկայացնելու հա-

մար՝ մարդ պէտք է երգում ըրած ըլլայ ամէն գնով, մահու չափ ուրանալու ճշմարտութիւնը: Յաւելուածագիրը կը ներկայանայ մին և նախակարապետը ճշմարտութիւնը ուրացողներուն. «նիր» ի առասպելին հեղինակը եթէ խենթ մը նկատէինք, մինչև աստիճան մը պատիւ էր այդ իրեն համար. — անգիտակցութիւնը արդարացում մը պիտի ըլլար իր արարքներուն: Բայց ո՛չ խենթ մը չէ՛ անիկա, այլ հասուն գիտակցութեամբ ու կանխամտածութեամբ է որ կընէ՛ ինչ որ կընէ: Եւ ա՛յս է ծանրագոյնը: Բայց պարագաներ կան ուր ամենէն անուղղայ ստախօսներն անգամ ա՛լ անկարող կըլլան իրենց մէջտեղ գլորած սուտին վրայ պնդելու. ճշմարտութիւնը երբեմն ա՛յն աստիճան արեգակնափայլ երևան կուգայ որ ամենէն անպատկառ ուրացողներն անգամ կ'ստիպուին անոր առջև լուել, պապանձիլ: Պապանձումը՝ իրա՛ւ, պարտութեան խոստովանութիւն է. բայց պարտութեան շատ աւելի նրւատտութիւն և խայտառակութիւն է յայտնի ապացուցուած ճշմարտութեան դէմ առանց փաստի վայրահաչուութիւնը: Ես տակաւին կը յուսամ որ յաւելուածագիրը, գէթ մեծաւանկերորդ ժամուն, գէթ այս յօգուածէս վերջ՝ պիտի նախընտրէ պապանձումը՝ քան թէ շարունակէ սուտ ու փուտ առարկութիւններով ու այլանդակ պատճառաբանութիւններով ճշմարտութիւնը խեղաթիւրելու իր յուսահատական՝ միանգամայն ծիծաղելի՝ ճիգերը: Այդ գուր ճիգերը ո՛րչափ աւելի շարունակուին, այնչափ աւելի պիտի հաստատուի մտքերու մէջ արդէն գոյացած տխուր համոզումը իր նկարագրի մասին. այս ուղղութեամբ իր գրութիւնները ուրիշ բանի չեն կրնար ծառայել բայց միայն աւելի և աւելի ապացուցանելու եւ հռչակելու իր բարոյական սնանկութիւնը:

Յաւելուածագիրը արդէն այնպիսի երկսայրաբանութեան մը առջեւ կը գտնուի որ իրեն համար — ինչպէս աշխարհի լաւագոյն փաստաբանին համար ալ — անկարելի կը դարձնէ առանց ծաղրելի ըլլալու վէճը շարունակելը: Այդ երկսայրաբանութիւնը հետեւեալն է.

Կա՛մ ի՛նք սուտ կը խօսի և կա՛մ՝ մեզի հետ, գիտե՞ք որոնք, ... Ի՞նչ ՊԱՇՏ-ՊԱՆԵԱԼՆԵՐԸ, Սրբազան Առաջնորդն ալ միասին առնելով: Արգարեւ, եթէ ի՛նք յաւելուածագիրը չէ՛ սուտ խօսողը, ուրեմն ինքը պէտք է յայտարարէ թէ սուտ է Ատենագրութիւնը, սուտ է Վսեմ. Բէիզեան պէյի պաշտօնագրին պարունակութիւնը, սուտ են նոր Թաղ. Խորհրդի կազմութեան առթիւ Աղեքսանդրիայէն «Արշալոյս»ին և «Շարժում»ին նոյն 1899 Դեկտեմբերին իսկ ուղարկուած թղթակցութիւնները, որոնք մեզի պէս կը պատմեն եղելութեան մանրամասնութիւնները:

Աւելի՛ն կայ. Սրբազան Առաջնորդը բեմէն յայտարարեց թէ՛ «օրէնքին գործադրութիւնը ժամանակի կը կարօտի. բայց թէ՛ ժողովուրդը որչափ ատեն որ չի խաղաղի՝ Օրէնքը ՉԸ ՊԻՏԻ ԳՈՐԾԱԳՐՈՒԻ»: Եթէ օրէնքը բռնաբարուած չէր, եթէ արդի Թաղ. Խորհուրդը ըստ օրինի ժողովրդէն ընտրուած էր, ինչո՞ւ Սրբազան Առաջնորդը այդպիսի անիմաստ յայտարարութիւն մը պիտի ընէր, փոխանակ պարզապէս ըսելու թէ «օրէնքը արդէն գործադրուած է»: Ու չմոռնանք որ այս կէտի մէջ Սրբ. Առաջնորդին մեզի համամիտ ըլլալուն՝ եկեղեցւոյ բեմէն արտասանուած այս խօսքէն զատ՝ գրաւոր ապացոյցներ ալ ունինք:

Աւելի՛ն կայ, Ֆանթեզի՛ սթ թղթակից. քանի մ՛անգամներ այս էջերուն մէջ յայտարարեցինք, ու չլսելու վարկիք. անգամ մ՛ալ ըսե՛նք բարձրաձայն որ թերեւս ձեր ականջը մտնայ. վերո-

յիշեալ արդէն ջախջախիչ ապացոյցներէն ու շատ մը փաստերէ զատ՝ մէջտեղն են նաև Վսեմ. Պօղոս Փաշայի բերանացի և գրաւոր յայտարարութիւնները, այո՛, Վսեմ. Փաշան, արդի Պատ. Թաղ. Խորհրդին ստեղծողը, գրաւոր՝ ի՛ր usnruագրութեան ցակ անպատուակ կերպով յայտարարած է թէ Արդի Թաղ. Խորհուրդը ի՛նք կազմած է, բացառիկ պարագաներու բերմամբ, մասնաւոր նպատակով մը, եւ առժամեայ հանգամանակով: Ասոր դէմ ի՛նչ ըսելիք ունիք. կը կասկածի՞ք այսպէս գրած ըլլալուն. բայց ն. Վսեմութիւնը այլ ևս բացակայ չէ, հո՛ս է, կրնաք իրեն դիմել և ստուգել թէ այդ տեսակ յայտարարութիւն մը ըրած է թէ ոչ: Ուրեմն, կա՛մ պիտի ըսէք թէ ն. Վսեմութիւնն ալ մեզի հետ, Վսեմ. Բէիզեան Պէյի հետ, Սրբ. Առաջնորդին հետ համաձայն՝ անճիշդ կերպով կը ներկայացնէ իրողութիւնը, ու միայն դուք էք որ ճշմարտութիւնը կը խօսիք, երբ կը հաստատէք թէ այս Խորհուրդը նախորդին շարունակութիւնն է ժողովրդէն ընտրուած... և կա՛մ պիտի ըսէք, այդ լուրերամբ հաստատելով թէ սուտ խօսողը այդ Պատ. անձնաւորութիւնները չեն, այլ միայն և միայն դո՛ւք:

Այս վիճաբանութիւնը արդէն վաղուց վերջացած պէտք էր ըլլար... ձեր պապանձումովը. բայց, կերելի, կիրքը ձեզի թոյլ չիտար տեսնելու իրական կացութիւնը որուն մէջ կը գտնուիք: Ազատ էք ուրեմն շարունակել գրելու ինչ որ կուզէք. բայց, եթէ կրնաք, փոխանակ առանց փաստի անուանարկիչ վայրահաչութիւններ ընելու, ուղղակի պատասխանեցէք մեր գրած հարցերուն. պատասխանեցէ՛ք, եթէ կրնաք:

Ու երբ որոշէք այս կէտերուն պատասխանել, չմոռնաք, խնդրեմ, բանիբուն թղթակից, սա երկու հարցումներու ալ պատասխան մը չնորհել:

1. Եթէ այս Խորհուրդը չնախորդին շարունակութիւնն է, ի՞նչ հրաշքով Տեարք ձէվահիրճեան և Իփէքեան դուրս մնացին անկէ, մինչ վերջնակա նապէ, հրաժարած անդամներ դարձեալ հրաւիրուեցան Խորհրդին անդամակցութեան:

2. Ինչո՞ւ հրաժարուեցան վարժարանի նախորդ Հոգաբարձութեան անդամները. արդեօք նախորդ Խորհրդին յոժման և նոր Խորհրդի մը կազմութեան առթիւ չէ՞ր որ հրաժարեցաւ Հոգաբարձութիւնը: Եթէ չէք յիշեր, դիւանատունը ձեր սրամադրութեան տակն է. և հո՞ն դատէք Հոգաբարձութեան անդամներու հրաժարագիրները, օրինակ, Տ. Ատենապետինը, ու խնամով կարդացէք...:

Վերջին խօսք մ'ալ մի՛ մոռնաք թէ ճշմարտութիւնն էալ Անախացեղի խրատն մ'է:

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ

ԿԱՐԴԱԼ ՆԵՐԿԱՅ ԹԻԻԻՆ ՄԷՉ Տ. Վահէ Շամլըեանի «Մաւղոյ բաժին»ը:

ՔՐՈՆԻԿ

— Ս. ԲԵԹՐԱՊՈՒՐԿԷՆ նոյ. ճին Լա Գոռեսարոնեանս Բոյիթիփ ի կը հաղորդուի թէ՛ Ռուսիան շատ դժգոհ է Թուրքիոյ մէջ տիրող անապահովութենէն: Կը հաստատուի թէ՛ ռուսական դահլիճը յանախ ազդարարագիրներ տուած է Դրան, որպէս զի բարելաւ ներքին վարչութիւնը, եւ նոր բողոքներ ալ ըրած է Միս Սթոնի յափեսակման առթիւ:

— ԿԻԼԻԿԻՈՅ կաթողիկոսական ընտրութիւնը կ'երեւի թէ մօտեւ կը վերջանայ: Լուստեղեակ աղբիւրէ մը կը հաւաստուի թէ՛ Սոյոյ հայրապետական Աթոռը պիտի բազմի հաւանականօրէն Գեւ. Տ. Սահակ Ս. Արքեպիսկոպոս Խա-

պայեան, Երուսաղեմի Ս. Յակովբեանց Լուսարարապետք որ, դեռ 50 տարու, մեր ներկայ հայ Եկեղեցականութեան փառներէն մին է:

— Տ. ԱԻԵՏԻՍ ՔԷՅ. ՇԱՂՈՅԵԱՆ ՎԱՆԵՑԻ, ծանօթ իր ռամկական երգերով ու Եկեղեցական ձայնագրագէտի համբաւովը, որ, Վեհ. հայրապետին մասնաւոր կոնդակովն Եկած հոս կը գտնուէր Երկու ամսէ ի վեր, վերջապէս, Գեւ. Սյվապետան Սրբազանի կրկնակի դիմումներուն վրայ, տեղիս Առժ. Թաղ. Խորհուրդին արտօնութեամբ անցաւ Բաղափիս Ս. Պողոս Պետրոս Եկեղեցիին մնայուն Բահանայից շարք:

Շնորհաւորելով յիշեալ Տ. Հօր այս նոր անուանումը, կը մաղթեմք որ իր շուրջը չ'ստեղծուի հակառակութեան հոսանք մը, տուած ըլլալով իր փչթէ շատ առաւելութիւնները միս կարգակիցներուն վրայ:

— ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ԲԱՇՍ. ՆՈՒՊԱՐ, Բաղափիս Առժ. Թաղ. Խորհուրդին Աստեմապետք, ամսոյս 12ին զգ. օրը Բաղափս ժամանեց:

— ՌՈՒՍ ՔՍՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ. — Նոյ. 1 ի Լ'ԱՐՄԷՆԻՆ այս վերնագրով հրատարակած է հետեւեալ յայտարարութիւնները որոս դիւանագէտի մը, որուն հետ վերջերս տեսակցութիւն մ'ունեցած է եւ որուն անունը կ'ուզի սակայն ծածուկ պահել:

«Մասնաւոր ուսում մ'ըրած եմ Հայկ. հարցը, որ իր կարեւորութիւնն ունի Ռուսիոյ սահմանակից ասիական Թուրքիոյ ապագային համար: Իր ցեղին պատմական պատճօնին գիտակցութիւնն ըմբռնող ամեն Ռուսի պէս, վշտակութիւն կ'զգամ թրքական Հայաստանին հալածումը քիստոնեաներուն համար, այս պատճառով ձեզի պիտի ըսեմ անկեղծօրէն թէ՛ Հայերը, իմ կարծիքով, ի՛նչ պարտ էին չ'ընել որ իրենցս չը պաղեցնէին Ռուսիան, միակ երուպական տէրութիւնը որ ի վիճակի ըլլայ զիրենք կորսնցնելու կամ ազատելու:»

Պէ՛սք է, նախ, որ Հայերը գիտնան թէ՛ մեր Արժ. Գործ. Պատկանական աւստրիական բաժնի՝ մօտէն կը հետեւի բոլոր իրենց թերթերուն ու բոլոր ճրգ-սումներուն: Ուստի, գործը շատ լաւ գիտնալով է որ ձեզի պիտի ըսեն որ եթէ Թուրքիոյ Հայերը կը փափաքին բարե-լաւել իրենց բաղդը, պարտին յարմարիլ մեր ֆաղափականութեան պահանջումներուն եւ ջանալ վասկելու մեր դիւանագիտութեան վաստիւթիւնը:

Բանը դժուար չ'էր ռուսերուրք վերջին պատերազմէն յետոյ ու Ադիսաբոյր Բ. ի թագաւորութեան օրով, երբ որ Դուռը դեռ կ'ապրէր մեր յաղթող բանակներուն սարսափին տակ: Բայց երբ Գերմանիան ձեռնարկեց Թուրքերուն հայրայրեւոյ մարզիչ սպաներ. երբ Թուրքիան սկսաւ կերպով մը նորէն ձեռք բերել իր գիւնդական ուժը, ու երբ Ադիսաբոյր Բ. ի եղբրական մահը վայրկեանապէս ջլատեց Ռուսիոյ գործողութիւնը, այս վերջինը պէ՛տք տեսաւ փոփոխել իր ֆաղափականութիւնը Դրան նկատմամբ, ո՛չ թէ որովհետեւ զանի տակ կը կարծէր իրեն համար բարեկամ ու դաւանակից ազգ մ'ըլլալու, այլ որովհետեւ կ'ուզէր զանի արգիլել որ լծուէր Երեւակի կառնին:

Հայերը սխալը գործեցին նկատողութեան չ'առնելու այս բարեբոն-մին հետեւանքները: Կարծեցին թէ պիտի կրնային գործին մէջէն ելնել Կլասը-թօնի, Պրայսի, Գարնարվօնի, եւն, նեցուկով: Իրենց ի՞նչ օգուտ ըրին այս մեծանուն տեսնաբաններուն հատերը: — Յուզելու, կ'ըսեն, Եւրոպայի մէջ հան-րային կարծիքն ու ստեղծելու համակ-րանքի հոսանք մը հարստահարուած Հայերուն համար: Փանափի՛ փոխարի-նում մը թուրք Հայաստանի տերածին 300,000 Հայերու կոտորածին եւ ռու-սական համակրութեանց կորուստին հա-ար, որոնք այնքան թանկագին են Օսմ.

բարբառութեան ֆրիստնեայ գոհերուն համար...:

Ամենասեւ թուառութիւնը կը տիրէ այսօր հայաթուրք նահանգներուն մէջ: Ձեր կրօնակիցները կը լինն իրենց ազգային եկեղեցին ու երբեմն ալ ֆրիստ-նեական կրօնը, զտնելու համար պատե-պանութիւն մը: Կովկասի, Խրիմու, Ռու-մանիոյ, Պուլկարիոյ, Պոսնիոյ ու Կրե-ստի մահմէտականները կուզան ամեն օր տկարացնել Հայոց թուական կարեւ-րութիւնը: Համիսլամութիւնը կ'սպառ-նայ բնաջինջ ընել բովանդակ հայ ցեղը: Ո՞վ պիտի կրնար պատեպանել այս դժբաղդ ժողովուրդը, գէթ բարո-յապէս: Անգլիա՞ն, որ Գերմանիոյ ձեռքը թողուց որ անցնի իր դերը: Գերմա-նիա՞ն, Թուրքերէն տելի Թուրք: Ֆրան-սա՞ն, միտք վեհանձն, բայց պատե-րուած հազարաւոր դժուարութիւններէ ներսն ու դուրսը: Ռուսիա՞ն, յարմէ հետէ Հայերը բարձրաձայն ֆարոգեցին թէ իրենք կրնային առանց անոր աջակ-ցութեան ալ յաջողիլ եւ թէ՛ Անգլիացի մարդասէրներուն հատերը բաւական էին ինքնավար Հայաստան մը ստեղծելու Ռուսական նահանգներուն սահմանա-կից: Ընկերվարական կուսակցութիւնը կամ տրիբուններ ինչպէս են Գլէմանսօ Ժօրէս, Ռօսթօր, եւ *ալեկալն իւր ա-րօքն*. — կղերական կուսակցութիւնը. — Սրբազան Շարմբան մը կրնայ հա-ւաքել ֆանի մը գումարներ զանոնք դը-կելու համար Հայաստանի սովետալնե-րուն, կրկնելով իրեն լսել ուզողներուն. *«ողորմութիւն կը խնդրեմ, թշուառ հերետիկոսներուն համար որ կ'ընդունին կարողիկ կրօնի զիրկը դառնայ:»* Բայց փոքրաթիւ անհասներու յասկաց-ուած այս ողորմութիւնները չ'պիտի կրնային ամոքել թուառութիւնները բովանդակ բնակչութեան մը:

Ձեզի կը կրկնեն. եթէ Թուրքիոյ Հայերը կը բաղձան բարեկաւել իրենց վիճակը, պարտին ջանալ, ամենէ ա-

նաչ, Ռուսիոյ վսահութիւնը շահելու։ Չեմ ըսեր թէ այս կերպով վարուելով՝ պիտի ձեռք բերեն Չարին աջակցութիւնը Ռուսիոյ սահմանազուխները սնկելու համար ինքնավար Հայաստան մը. բայց պիտի կրնան ներհնչել ոռու կառավարութեան ու ժողովուրդին այն համոզումը թէ՛ հայ սարը թեմամբ չէ՛ իրենց, ինչ որ արդէն մեծ փայլ մը պիտի ըլլար։

Հասնելու համար այս արդիւնքին, իսկոյն հարկաւոր է որ հայ *օրկանները* չը յարձակին երբէք մեր Կայսեր անձին դէմ, որովհետեւ Չարը բարեպաշտ օրթոսոսնա մըն է, զոր չէ՛ կարելի նմանցընել ֆրիսոնեայ արեան ծարաւի Սուլթանի մը. զի ամեն Ռուս, պահպանեղական թէ ազատական, պիտի արժանանայ լսելով թէ՛ հայ մամուլի բերանները թոյլ կուտան իրենց՝ իծբծելու կամ նախասելու ամենայն Ռուսաց Կայսրը, որովհետեւ Չարը յանցաւոր չէ, եթէ նախարար մը, ինչպէս, օրինակի համար, *Լուպանով - Ռոստոմար* ի իշխանը, կը հետեւի մոլար ու աննախասեստ փողափականութեան մը, իր վեհապետը հաւասացնելով թէ՛ հայրենիքի շահերուն համաձայն է այն։ Այո՛, Լուպանով իշխանը մոլար ու աննախասեստ փողափականութիւն մը բռնեց թուրքիոյ Հայերուն հանդէպ, զի Սուլթանը հլու եւ հաւասարիմ դաշնակից մընելու ցնորական յոյսը կը զգուէր. բայց այս ձախորդ գործին մէջ, յանցապարսք՝ ի՛նք էր, ո՛չ թէ Չարը։

Եթէ Ալեքսանդր Բ. ի օրով 20,000 000 ստրուկներ ազատագրուեցան եւ ազատական օրէնքներ հրատարակուեցան ի Ռուսիա, պատկառն այն է որ այդ Կայսրը քաջապատուած էր լուսամիտ պատեօնասարներէ, որպիսիք են իշխան Գորչակով, երկու Միլիտարները (մին պատերազմի նախարար, միւսը Պետական Խորհուրդին անդամ), զորավար Ռոստովնով, օրէնագէտ կոմս

Սրեբրանով, Մեծ - Դուխ Կոստանով Կոստանովսկի, Պետական Խորհուրդին Նախագահ, եւն, եւն։

Աղեքսանդր Գ. ի օրով այս ազանդաւոր մարդոց տեղը դրուեցան միջակամիտ խորհրդականներ, եւ յետադիմական փողափականութիւն մը ծայր տալ սկսաւ թէ՛ ներսը թէ՛ դուրսը։ Գալով Նիփոլա Բ. ի, ամեն մարդ կը հանչէ անոր փողոցիկ ու խաղաղատը բնոյթն ու մարդասիրական հայեացները, որոնք ըստ բաւականին արդէն հաստատուեցան խաղաղութեան Համաժողովին խմբումովը։ Իր նախարարներուն մէջէն է Ուիթի պէս մարդ մը, ազգայնութեանց բարեկամ եւ իրօք ազատամիտ ոգիով օժտուած. իսկ իր սիրականաց մէջ կայ իշխան Ուստոմարի պէս մարդ մը, Ս. Ռեբերպուրկովսկի Վեստոստովսկի սնօրէնը, փառքի ախոյեան հարստահարուած ազգերուն, որոնցմէ են թուրքիոյ Հայերը։ Չեւ հայրենակիցները ծանր յանցանք մը պիտի գործէին, յարձակելով այսպիսի վեհապետի մը դէմ։

Գրեցէ՛ք որչափ ուզէք թուրքերուն վայրագութեանց ու Սուլթանին համախալամական մանգերուն դէմ։ Յուցադրեցէ՛ք ամեն օր թուրքիոյ Հայերուն տրտնալիքներուն վրայ։ Հրատարակեցէ՛ք անուանի երոպացիներուն լուրջ գրուածները։ Բայց նոյն իսկ հայկական դասին շահուն համար, զգուցեցէ՛ք եղբայրակցելէ ընկերվարական կուսակցութեան, որ, սակայն, լոկ շուկ հանելու համար լաւ է։ Ու, մանաւանդ, իրատեցէ՛ք ձեր հայրենակիցները չը խօսիլ Մեծն Տիգրանի վաղեմի բազաւորութեան վերահաստատման վրայ Ռուսիոյ սահմաններուն մէջ։ Այս գնով, թուրքիոյ Հայերը պիտի կրնան օր մը շահիլ այն համակրանքը, որուն Արեւելքի բոլոր ֆրիսոնեայ ցեղերը կը պարսին իրենց մասնակի կամ ամբողջական ազատագրութիւնը, եւ առանց որո՛ւ բացարձա-

կապէս անկարելի պիտի ըլլար ձեր հայրենակիցներուն խուսափիլ հարստահարութենէն ու բնաջնջումէն:»

— **ՅԲԱՆՍ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԵՆՅ. 4** Կիստին մէջ տեղի ունեցան տաք վիճաբանութիւններ, որոնց քանի մը կարելոր մասերը կը բաղնէր ԹԱՆԷՆ:

**Տ. Մարտէլ Սընկա, ընկերվարա. կան - յեղափոխական.**

«Կը յուսան, ըսաւ ասեկախօսը, թէ՛ կառավարութիւնը նաեւ պիտի դիմած չ'ըլլայ Թուրքիի ու Լորանսոյի միակ գործերուն համար: Կարծեմ թէ պիտի ուզէ դադարեցնել սաչ Հայաստանի ջարդերը:

Կարծեմ թէ՛ Տ. Տեղաւսէն ձեռք բերաւ խոստումը թէ նոր ջարդերու ծրագիրները պիտի անպայմանօրէն օրսագործին:

Կ'ըսուի թէ գործերը պիտի մնան կանոնաւոր վիճակին մէջ: Նախարարը մեզի պիտի ըսէ թէ ի՛նչ է այս կանոնաւոր վիճակը: Այս կանոնաւոր վիճակը՝ ասո՛րքն է Եւրոպայի, զի այն կը կայանայ բռնաբարութեան, անուանգումներու եւ սպանութեան մէջ:

Կառավարութիւնը պէ՛տ է դառնայ դեպ ՚ի Եւրոպայի տերութիւնները, ինչպէս իսկ համար անոնց ընկերակիցը Ֆրանսայի հետ որպէս զի Սուրբսանէն ստանայ անկեղծի վիճակի մը դադարումը:

Ռուսներ քարեկանս պէ՛տ է հարցապնդի Հայոց կացութեան վրայ, բայց իմ փոքրիկ պրակիս մէջ ունիմ խիստ վստահելի վաւերաբարդեր որոնք կը հաստատեն թէ դիտում կայ վերսկսելու այս ձեւով Հայաստանի ջարդերը:

Այս պայքարը պիտի գայ իր ժամուն:

Բայց կ'ըսեմ նախարարին թէ՛ իրեն կ'սպասենք յայտարարութիւններ որ երկրին թոյլ սակ գիտեալ թէ մեկն Թուրքիա չ'ենք գազեր Թուրքիի ու Լորանսոյի միակ գործերուն համար, բայց թէ՛ Տերութեանց հետ միաբան՝ վնասելու անկարելիութեան մէջ պիտի դնենք զանի՝ որ կոչուեցաւ ՄԵՍ ՍԱՐԴԱՍՊԱՆԸ:»

**Տ. Տընի Բօշէն, միապետական.**

«Երբ մեկն կը բողոքէ ինքն Հայոց ջարդերուն դեմ, միջանկարծիւն մը կը մադրէ ինքն:

Իսկ Կ. Պոլսոյ փարսիներով կարելի էր զբաղիլ երբ այդ փարսիները կը ներ-

կուէին անկեղ թշուառներու արիւնով:

Ի՛նչ ալ ըլլայ շարժառիթը՝ մեր այսօրուան գործերուն, մեր դրօշակը բացուած է: Կերթա՞նք պահանջել որ խոստացուած բարեկորոզումները գործադրուին: Սուրբսանէն ա՛յս պիտի ուզուի:

Պե՛տ է յարգելի ընծայել մեր թեւարկութիւնը, սպանովել Պերլիի դաշնագրին գործադրութիւնն ու Իւզնազոյ (Capitulation) յարգանքը: Նախարարը պիտի անշուշտ հանի մեկն այս առիւտ փակի մը մանրանսանութեանց:»

**Տ. ՏԷԼԴԱՍԷ.**

«Փորձեցի արգիլել կրկնումը 1894, 1895, 1896 ին գործուած խոչընդոթեանց: Ֆրանսական նաւաստւոր վերելուցաւ, անցած տարի, Փոքր Ասիոյ ծովեզերքները. այս տարի, նոր ջարդերու սպառնալեաց առջեւ, մեր նաւաստւոր խարսխեց Իսկէնդերուն: Չ'եմ ուզեր հոս թուել Հայերուն կողմէն հասած շնորհակալեաց արտայայտութիւնները, Ֆրանսայի ձեռք առած այդ միջոցը մեկնելով իրենց փրկութեամբ:

Ինծի կը հարցուի թէ ի՛նչ կը խորհիմ ընել ապագային: Այս ջարդերուն վրայ շատ բաներ պատմուեցան, որոնք միշտ անցած չ'էին ֆենուրեան բովէն: Սակայն, դժբաղդաբար, ստուգուեցան:

Մեր գործակալներուն վերջին տեղեկագիրները, սեպտ.ի թուականով, կը հաստատեն այդ երկիրներուն ողբալի կացութիւնը: Մեոյ ու Սասնոյ ջարդերը հեբուեցան, բայց Կարնէն հեռագիր մը կը յայտնէ գնդերու առաւումը յերգում, Հայերը Քուրտերուն դէմ պատերազմու համար, կ'ըսեն Թուրքերը. բայց Հայերը չեն վստահիր այդ պատերազմութեան:

1856ի ու 1896ի դաշնագիրներով նախատեսուած բարեկորոզումները չը գործադրուեցան. փրստոնեաները հոն չ'ունին իրենց արժանի կացութիւնը:

Յեղերուն զանազանութիւնն ու անշուրթիւնը՝ տարակոյս չկայ թէ՛ կը

դժուարացրնեն հոն արդար վարչութեան մը հաստատուիլը:

Գալով ինձի, իմ անցեալ վարմունքս գրասական մ'է ապագայ վարմունքիս: Ասիա, ինչպէս նաեւ Պալասները, Մակեդոնիոյ թէ Հայաստանի մէջ, Հանրապետութեան կառավարութիւնը պիտի անդադար ձայնը բարձրացրնէ որպէս զի հարստահարութիւնը դադրի, որպէս զի արդարութիւնը սին բառ մը չ'ըլլայ, որպէս զի դաւենագիրները նկատի առնուին:

Ասի պէտք է, Թուրքիոյ շահուն ու աւելարհի խաղաղութեան համար: Բայց Ֆրանսան չէ՛ միայն ստարագրող դաւնագիրներուն, որոնց գործադրութիւնը չ'կրնար ի՛նք միայն հարկադրել:»

Խորհրդարանին ամենատարբար պահուած է երեկուան նիստին, ուր պիտի տեղի ունենային կարեւոր հարցապնդումները Հայկ. հարցին վրայ: Առ այժմ, ոչինչ կարելի է ենթադրել: Ճիշդը սակայն այս է թէ՛ Ֆրանսան Թուրքիոյի ու Լորանսոյի ոսկիներուն համար միայն դրկած եղաւ իր մարտնասերը...: Սպասենք:

ՄԱՌԷՆ ի 2 նոյ. ի խաղաղական ինքնապաշտպանութիւնը.

### ԵՐԿՈՒ ԿՅԻՌ, ԵՐԿՈՒ ՉԱՓ

Առաջին պատկեր. 1896 Օգոստոսի գիշեր մը:

Հոն, Ոսկեղջիւրին խորը, Խասգիւղի նեղ գոտիներուն մէջ, չունը տարած է. Պոլսոյ շուքին տակ, սուղոց մը թնդաց: Նեղ ու ցած աներուն երկայնքը կը սողոսկին ստուերներ, և յոյն փոքր սրճարաններուն առջև լուռ մուռ համախմբումներ կը կազմուին: Յանկարծ, ապակի մը կը ճռնչէ, յետոյ երկու, յետոյ տասը: Գռները կռնակի վրայ կ'իյնան խուլ ճարճատիւններով: Մարդկային ճիչ մը կը ճեղքէ օդը, յետոյ քսան, յետոյ հարիւր ուրիշներ: Մէկ քառորդ ժամուան մէջ, գիշե-

րային զարհուրելի խառնուրդ մըն է: Կիներ զը խլուին կը հանուին իրենց անկողնէն, կը քաշկռուտին իրենց մազերէն ու փողոցները կը լլկուին կամ կը խողխողուին: Ծծկեր տղոց մարմինը կը կտրեն երկուքի՛ ետթաղանի մէկ հարուածով կամ միտը յօշ յօշ կը պատուտեն: Մարդիկներու աչքերը կը պայթեցնեն կամ դատտակները կը կտրտեն: Բիշը կ'իջնէ անխնայի ամենուին վրայ, կահոյք կամ մարդկային դանկեր, ու միտի կտորուանքը դէզդէզ կը կուտակուին, ակոռներու բեկորներուն հետ խառնիխուռն, մինչդեռ արիւնը կը հոսի գիւնխառն վտակներով:

Ոստիկաններ կ'անցնին ու կը խրախուտեն թոպիչները «Հապօ՛ն, դայէ՛ք, տէ՛րը կը թոյլատրէ...» Միևարե՛ններուն գազաթը կ'երևին միտեզգիներն ու ջահերուն նշոյլով փախստական մը ցոյց կուտան զօրքերուն. «բռնէ՛, բռնէ՛, ասի՛, անի՛:» Կիներ, հռնախնի մէջ, դրանիկներուն ծունկերը կը փաթթուին ու շնորհ կ'ոռնան. «Անա՛ն, ա՛նա՛ն, դո՛ւթ, դո՛ւթ:» բայց միայն, «Սպաննէ՛, սպաննէ՛» ի ազաղակն անոնց կը պատասխանէ:

Փլփլած սալարկներուն վրայ մարմինները կը դիզուին: Կը նետեն զանոնք փոքի վրայ, ու զօրքերը կօչկի կրունկի հարուածներով կը դուրսն ա՛նոնց գլուխները, ուղեղները ցայտեցնելով պատերուն վրայ: Ասիկայ կը տևէ այսպէս 4 ժամ, մինչև որ թեւերը յոգնին զարնելէ ու սաքերը՝ կոխկըտակէ փշրելէ, մինչև որ դահիճներն ըլլան շնորհ հայցողները:

Այն ատեն, ոստիկանութեան սպաներն անգամ մ'ալ կ'անցնին. «Ետա՛ն գ, ետա՛ն գ...»:

Մարդիկ ցեխը կը թօթուեն իրենց ներքանէն: Խասգիւղ նորէն կը քնանայ ծանր ու խոյ քունը, մահուան քունը և միայն, հոգեարի մը հռնախնը կուգայ վրդովել զիշերուան հանդարտութիւնը:

Սակայն, առաւօտուն, Սթանպուլի փողոցներուն մէջ, Բէրայի քարափնե-  
րուն վրայ ու Չալաթիոյ շուկաներուն  
մէջ, շուկը կը տարածուի թէ՛ բան  
մ'անցնի դարձեր է գիշերը, Թսկեզ-  
չիւրին խորը, Վիտեօ, Տէրը թոյլ աը-  
ւաւ որ սպաննին քրիտոսեանները»։  
Լուրը կը հասնի մինչև Քրանսական  
Գեազանատունը։ Քարգաման մը կը վա-  
զէ սուրբել։ Կը տեսնէ բոլոր ինչ որ  
եղած է և բոլոր ինչ որ Քրանսական  
մամուլին պատիւը, Ելմորիա պատին  
եզող գրագէտ մը, Տ. Վիգոր Պէրար,  
պիտի նկարագրէր անմահ էջերու մէջ։  
Կը տեսնէ կիներ, Ղարգերէն ճողագրած  
ու խենդ Թագած, փողոցներուն մէջ,  
Թաղաբեկիւմ, պեռինը քերելով ի-  
րենց եղունգներով ու բերանին հոգ  
լեցնելով։ Կը տեսնէ շուները «նուրի  
եռեկինկած» որ կը թափառին քաղաքին  
մէջ։ Կը տեսնէ զոգիւր խառնուրդը՝  
մարդկային ծուէններու և կահոյքի  
բեկորներու...։

Թերևս տեսաւ նաև Քրանսական  
հին արձանագրութիւնները քանի մը  
դռներէ կախուած, Քրանսական գըր-  
քերը՝ դրագարաններու քանի մ'ան-  
կիւնները մոռցուած, Քրանսական պա-  
կերները՝ քանի մը պատերու փակցը-  
ւած. զի բոլոր այդ մարդիկ, այդ կա-  
նայք ու այդ տղայք, արհաւիրքի մէկ  
գիշերուան մէջ խոզխոզուած, Ծրան-  
սայի պաշտպանեալներ էին. Գրեթէ ա-  
մենքն ալ գիտէին խնոր լեզուն, ու  
երբ որ կը մեռնէին, անոր անունն  
ունէին իրենց շրթունքին վրայ։ Բայց  
Ծրանսան աչքերը փակեց ու խցեց ա-  
կանջները։ Կը Ղարգէին հո՛ս ու հո՛ն,  
երևի հարիւր հազար եակներ, զորս  
երգուած էր ինք պաշտպանելու. ինք՝  
գահիճին հետ իրաւախոհութեան մտաւ։

Երկրորդ պատկեր. 1901 Յոգոսոսի առաւօտ մը։  
Գողոտային վրայ, Բարիզ, իրարու

կը մտենան, մտահոգ դէմքով մը.  
— Չէ՛ք գիտեր ծանրակշիւ լուրը...  
— Ա՛յ. ի՞նչ կայ որ.  
— Փառաւոր խորում մը կայ Քրան-  
սայի ու Թուրքիոյ միջև. Թեր գեա-  
պանը կը վերագաւառայ. Ծրան գեա-  
պանն առաւ իր անցագիրն ու կ'եր-  
թայ։ Ծանր բան է, շատ ծանրակշիւ...  
Թերևս նաւատորմից մը պիտի գրվուի,  
ու մըտածել նաւահանգիստ մը, ձեռք  
դնել մաքսատան մը վրայ...  
— Ափո՛ս, բայց ի՞նչ անցաւ դար-  
ձաւ։  
— Ի՞նչպէս, ի՞նչ անցաւ դարձաւ...  
Ահա ելի՛ր բան մը...  
— Տ. Գոնսկան ծե՛ծ կերաւ արդ-  
եօք Սուլթանէն.  
— Այ,  
— Ծրանսական նա՛ւ մը սուղուեցաւ  
Թուրք նաւատորմէն. Թուրքոյն գը-  
շտ'կը նախատուեցաւ արդեօք...  
— Այ, ա՛լ աւելի ծանրակշիւ է,  
Թուրքիոյ տունն ու Լորանտո առնը չե՛ն  
վճարուած...։ Թուրքիոյ ու Լորանտո,  
լաւ հաղկեցէք, ահա տասը տարի է որ  
դրամ կը պահանջեն Սուլթանէն ու ասի  
չը վճարէր։ Պէտք է պաշտպանել մեր  
ազգայինները։ Բացարձակապէս պէտք  
է։ Մէջ կը խաղայ մեր արժանապատ-  
ուութիւնը, մեր ազգեցութիւնն Արե-  
ւելքի մէջ։  
Մամուլին մէջ կը բարձրանայ այն  
ատեն զայրագին կանչ մը, որ երթալով  
կը մեծնայ, աճելով կ'տնի ու կ'ըն-  
դարձակի։ Թուրքիոյ չը վճարե՛ն...  
Լորանտոն չը գանձէ՛... Ա՛յ, բայց որի՞  
տեղ կը գնեն մեզ, Ծրանսայի այս եր-  
կու Ծրանսայիները պիտի ծագրուին ու  
պիտի խաբուին ուրեմն Սուլթանէն  
անպատիժ ու մենք չը պիտի՞ միջա-  
մըտենք, ու մենք թեկերնիս խաչա-  
ձեւած պիտի նստի՞նք. այն ատեն, ինչի՞  
պիտի ծառայէ նաւատորմից մ'ունե-  
նալը...։

Ու կանչը կը օստկանայ, կուգայ

կը զարնուի քէ s'Օրսէյի խաղաղիկ պարիսպներուն: Թուպինի. լոկ այս բա՛ւը կայ բոլոր բերաններուն մէջ: Լօրանտօ. լոկ ա՛յս անունը կայ բոլոր սիւնակներդուն մէջ: Անո՛նք իսկ, որ ներողամտաբար կը ժպտէին Միւնիթ պէյին անցքին վրայ, սրտմտօրէն երեսներն կը դարձնեն անկէ: Անոնք որ երբէք չէին գրեթէ Ապտ-իւլ-Համիդի անունը, առանց առջևը ն. վ. սկզբնատառերը դնելու, հիմայ կը հարցապնդեն ու կ'սպառնան տնոր: Կարելի է անոր ներել շատ բաներ, բայց, ոչ Լօրանտօ, ոչ Թուպինի ո՛չ ալ քարափ մը վերագնելու մերժումը: Եւրոպան արդէն միաբան է, պէտք է որ Փրանսան առջևէն երթայ: Թուպինիի վրայ կը խօսին Լոնտրա ու Լօրանտօյի վրայ կը ճառեն Վիէննա: Կա՛մ Թուպինիի ու Լօրանտօյի պէտք է վճարել, և կա՛մ Փրանսան պիտի կրած ըլլայ Թշնամանք մը որ զանի յաւիտենապէս պիտի կործանէ Արևելքի մէջ:

Օ՛ն պինդ կեցի՛ր, Թուպինի՛, և դո՛ւ, Լօրանտօ՛: Իուք ձեր ետին ունիք ամբողջ երկիրը, ազգին բովանդակ զանգուածը: Պիտի վճարուիք դուք բոլոր մեր նախահայրերուն արիւնովը զոր ունինք մեր երակներուն մէջ: Յառա՛ջ, բարեկամներս: Իանակը կէտին: Եւ թո՛ղ համաձայնումի աղաղակն ըլլայ. Յրանաւ ու Թուպինի՛...:

Ու եթէ ես կարող չ'եղայ զսպել փափագս հանրութեան աչքերուն առջև դնելու այս կրկին ու արտակարգ պատկերը, ո՛չ թէ վասնզի դիւրին կուգայ օրագրողի մը գրչին, այլ որովհետև, միւս առաւօտ, թերթի մը մէջ կարգացի հետեւեալ տողերը, որ երեսս կարմրցնել տուին. «Կառավարութիւնը հանրային կարծիքին պոռթկումին տակ, վճռեց վերջապէս ազգօրէն գործել...»

Հանրային կարծիքին պոռթկումը, որպէսզի Լօրանտօներու պահանջը չը տառապի, որպէս զի Թուպինիի փոխգիւրն ընդունուի՛...: Աղէ՛, տեսներք, մի՛ ըսէք այդ բանը. ըսէ՛ք ինչ որ ուզէք. ըսէք թէ ունեցանք դեսպան մը որ կարծեց թէ պարտի կորով ցոյց տալ ինք իր վրայ, ու նախարար մը որ կարծեց թէ պարտի հետեւիլ իր դեսպանին. ըսէք թէ 1901 ին նախարար մ'ունինք որ կը կարծէ թէ Փրանսայի անունը կապուած է մինչև իսկ առևտրական շահու գործերու հետ, մինչդեռ 1896ին նախարար մ'ունէինք, որ զայն կապուած չ'էր կարծեր նոյն իսկ մարդկային խնդիրներու հետ. ըսէք թէ այսօր շահերու գործերը նախադաս են ամենուն, ամենուն կը տիրապետեն, ամենը կը կոխեն, մինչդեռ զգացումը պէտք չէ ըլլայ ո՛չ ուրեք. ըսէ՛ք այս ամենը...»

Բայց մի՛ խօսիք հանրային կարծիքին վրայ, զի կը նուաստացնէք զայն ատակ ներկայացնելով բռնկելու խոշոր փողերու խնդրի մը համար. զի դուք պատճառ կ'ըլլաք որ Պատմութիւնը, — որ չը կաշառուիր ո՛չ ալ կը գնուի, — դրէ օր մը. «Փրանսայի հանրային կարծիքն ունեցաւ երկու կշիռ ու երկու չափ. չը յուզուեցաւ անի ետեմ հարխը հազար պաշտպանեալներու համար, որոնց արիւնն առին, բայց յուզուեցաւ երկու պաշտպանեալներու համար որոնց ոսկին առին: Ապտ-իւլ-Համիտէն՝ հաշիւը չը պահանջեց կեանքէ ուն, զորս առած էր ապօրինապէս:»

Ու քանի որ մեր փոքրիկ նաւատիները կը շարունակեն իրենց ճամբան հոն, դէպ ՚ի Արևելք. քանի որ մեր դրօշակը թերևս պիտի սարսուայ գնդակոծումի մը բամբուկն մէջ, թո՛ղ գէթ ըսուի թէ Թուպինի ու Լօրանտօ՛ պատրուակն էին լոկ, բայց թէ՛ ՀԱ-

ՅԱՍՏԱՆՆ էր իրօք պատճառը: Եթէ պէտք է որ ըլլայ իրարանցում մը, օգը հանուի բերդ մը, իյնայ մարդ մը, թո՛ղ ըսուի թէ՛ 1901ի ոսկին՝ շինծու կշիռն եղաւ լոկ, և թէ՛ 1896ի արի՛ւնը եղաւ ճշմարիտ կշիռը, որ հակել ս ուաւ նժա՛րը... :

ՍՏԵՅԱՆ 102ԱՆ

### ՄԱՍԼՈՅ ԲԱԺԻՆԸ

ԱՆԳՂԻԲԻՒՆԻ ԱՊՍԳԱՆ

Պր. Հ. Ճ. Ուէլս *Fortnightly Review*ի *Anticipations* վերնագրով յօդուածներուն շարք մը սկսաւ հրատարակել Ապրիլին: Ինչպէս վերնագիրը ցոյց կուտայ, մարգարէութեան պէս բաներ մը, կանխակալութիւններ են անոնք: Միշտ շարունակական չ'եղան Պ. Ուէլսի այդ յօդուածները, այլ Ապրիլէն վերջը՝ մէկ մ'ալ Սեպտեմբերին ու Հոկտեմբերին երեցան յիշեալ հանդէսին մէջ: Պատ. Յօդուածագիրը իր *Anticipations*ի առաջին մասին մէջ *locomotive*ի հաւանական կատարելագործութիւններուն, բարեշրջութիւններուն վրայ կը խօսի: Քսաներորդ դարուս մէջ, կ'ը.է, այս օրուան շոգեկառ.քերը օդանաւերու պիտի փոխուին ու մարդս այն աստիճան հանգարտ ու հանգիստ պիտի ճամբորդէ որ՝ շոգեկառ.քին մէջ նստած ատեն՝ զեղեցկազարդ, շքեղ *club*ի մը մէջ բազմած պիտի կարծէ ինքզինք: Երկրորդ «կանխակալութիւն»ներուն մէջ պատերազմի ապագան կը գուշակէ: Մինչև 2000 թուականը, կը հաստատէ Պ. Ուէլս, պատերազմները բոլորովին պիտի վերջանան. ո՛չ զօրավար պիտի ըլլայ ո՛չ բանակ և յաղթանակը պիտի տանի այն ազգը որ իր երկրին օրէնքները ընկերավարական

ամենալաւ հիմերու վրայ կազմակերպած է: Յիշեալ յօդուածներուն մին կամ միւսը թէև հաւասարապէս ընտիր ու հետաքրքրական, բայց այս անգամ ուան Մամլոյ Բաժինիս առաջին հաւուածին նիւթը պիտի կազմէ «Անգղիերէն լեզուի Ապագան», որու մասին յատկապէս և միւս լեզուներու մասին մասնաւորապէս մարգարէացած է Պ. Հէնրի Ճ. Ուէլս *Fortnightly Review* ի Հոկտ.ի թուոյն իր կանխակալութիւններուն մէջ: Առ հասարակ լեզուներու վրայ խօսելու ատեն կ'ըսէ. —

«Իսպալերէնը Բօյի եգեբլը գտնուած քաղաքներուն մէջ կրնայ ծաղկիլ. Քրանսերէնը, սակայն, անոր հետ ըլլալու պայմանաւ: Սպաներէնն ու ռուսերէնը զօրաւոր լեզուներ են, բայց եթէ ընթերցող հասարակութիւն մը չ'ունենան, ի՞նչպէս կրնան զօրանալ: Այդ լեզուներուն բանը լմցե՛ք է արդէն. Ասոնք՝ — լեզուները — դեռ 2000 թուականը չ'հասած՝ երկլեզուեան ազգաց մէջ հեզգհե՛տ երկրորդական պիտի դառնան, առաջնութիւնը սալով Քրանսերէնի կամ անգղիերէնի եւ կամ, ինչ որ նուազ հաւանական է, գերմաներէնի:»

Պր. Ուէլս, սակայն, ամենէն շատ և մի միայն հաւատք ունի ֆրանսերէնի ապագային վրայ: Անգղիերէնը, կ'ըսէ նա, աշխարհի տիրող լեզուն չի պիտի կրնայ ըլլալ ապագային մէջ եւ թէ ֆրանսերէնը՝ այս կողմէ՝ աւելի բազդաւոր պիտի ըլլայ: Յօդուածագիրը խիստ զօրաւոր փաստեր մէջ բերելով իր ըսածը կը հաստատէ այսպէս. —

«Փրանսերէնէ կամ Գերմաներէնէ աւելի՝ Անգղիերէն սորվելու օարժանիքները կը պակսին: Եթէ մեր ըրած ենթադրութիւնները ճշմարիտ ըլլան, պէ՛տ է գիտութիւնը զարգացնել: Այն որ գիտութիւնը կը սիրէ անպատեհաւ, լեզու մը պիտի սովորի. բայց բնականաբար,

այն լեզուն միայն որ իրեն գիտութիւն կը սորվեցնէ. Անգղիերէն լեզունով հրատարակուած գրքերը ճրանութէն եւ գերմաներէն լեզուներով հրատարակուածներէն քիչ են ու լուրջ գրքեր՝ համեմատաբար՝ խիստ նուազ. Քննադասական ընդունելութիւն մ'է որ կ'ըլլայ ճրանութէնով հրատարակուած ո՛ր եւ է երկի մը. բան մըն է ասիկա որ գրողին արժանիքը ցոյց կուտայ. Ասկէ զատ Ֆրանսայի քարգմանիչները աշխարհի ամենակարող եւ ամենաախոյժ քարգմանիչներն են. Ու ճրանութէնի անհասանելի բարձրութեանը վրայ գաղափար մը կազմելու համար, ուրիշ բան չ'մնար ընելիք, եթէ ոչ դիմել նախ բարիգեան գրավաճառանոց մը, ապա այցելել անգղիական համանուն վաճառատեղի մը. »

*Պր. Հ. Ճ. Ուէլս հակառակ իր լեզուի մասին այնքան յոռետես լինելուն, կարծես թէ՛ չ'ուզելով հաւատարկիւր ըրած կանխակալութիւններուն համոզկեր իրողութեան, կը մեղմէ գրիչը և կը խորհի — ինքզինք մխիթարելու համար գողցես — այն միջոցները որոնցմով կարելի ըլլայ թերևս օր մը անգղիերէնի վերականգնումը, տիրապետութիւնը ապահովել. Fortnightly ի Պատ. Յօդուածագիրը անգղիերէնի վերականգնումը հետևեալ պարագաներուն տակ միայն կարելի կը գտնէ. —*

Իրաւ է որ, եթէ ապագային բոլոր անգղիերէն սորվիլ ուզողներուն եւ բոլոր անգլիերէնախօս կառավարութեանց իրաւասութեան ներքեւ գտնուողներուն մեր լեզունով լաւ կրթութիւն մը տալու զգուշանք փորձ մ'ըլլայ. եթէ գրագէտներուն ու գրականութեամբ զբաղողներուն պէ՛տ էր անոնք պատիւն ու վարձատրութիւնը ընծայուի, եւ եթէ հրատարակութեան արդի աղտոտ առուսուրը փոխուի — ոչ թէ աշխարհի գրականութենէն մի քանի համով կտրուներ ընտել, ոչ թէ մի քանի հինգած համայ-

նագիտարաններ ծախել միայն եւ միայն անօթի մտերը խեղդելու համար, այլ կատարեալ հրատարակութիւն մը այն բաներուն որ եղած են ու կ'ըլլան — ու ամբողջ գրականութիւնը, ամբողջ գիտութիւնը եւ աշխարհի ժամանակակից բոլոր նոր գաղափարները այդ լեզուն սորվող ամեն մէկ անհասի օգտակար ըլլալու ծառայէ ան, պիտի ըսեմ որ մարդկային ընկերութեան ամբողջ գործօն մարմինը պիտի կարգաւ եւ նոյն իսկ գէր, ու, խօսէր քերես, մեր լեզուն. Աւելին կայ. — Անգղիերէնը պիտի կրնայ ըլլալ այն ասեմ Սֆանսինավիոյ, Տանըմարքայի, Հոլլանտայի, բոլոր Ափրիկէի, Հիւսիսային Ամերիկայի, Ասիոյ եւ Հնդկաստանի տիրող՝ ամենօրեայ լեզուն, տիրական միջազգային լեզուն եւ հետզհետէ մարդկութեան լեզուն. Բայց ասանկ ձեռնարկ մը. ժամանակին յարմար անմիջական խելացի միջոցներ, եւ անգղիերէնախօս ազգաց մտաւոր կեանքին նեւարիս վերածնունդ մը տալ կը պահանջէ. »

**ՓԻՆԼԱՆՏԻՈՅ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ**

*Պր. Էօթէն Լայմտօրֆէր՝ Նիւ-Եօրք հրատարակող Forum հանդիսին սեզոյ. Թուոյն մէջ Ռուսիոյ ներքին յիմար քաղաքականութիւնը չօշափող յօդուած մը ունի «Փինլանտիոյ կացութիւնը» վերնագրին տակ. »*

Իրաւ է որ Forumի ամերիկացի շուկայացի յարգելի յօդուածագիրը մէկ երկու ուռու և ֆինլանտացի բարձր-անձնաւորութիւններ կ'ակնարկէ իր դրութեան մէջ և անոնց նկատմամբ հակակրութեան, որի ու առեւտրութեան շեշտ մը կայ հոն, բայց Պր. Լայմտօրֆէրի յօդուածը կիրքով գրուած չ'է երբէք և խիստ իրաւացի կերպով անոնց դէմ գանգատելէ վերջ, կը նկարագրէ

Ֆինլանտիոյ արգի ոգրալի վիճակը: — Չար ոգի մը մտած ըլլալ կը թուի — կ'ըսէ *Review of Reviews*, աչքի առջև ունենալով Թրանսվալի, Հայաստանի և Ֆինլանտիոյ արգի կացութիւնն — այս պահուստ կայսրութեանց մէջ և կարծես միաձայն հաւանութեամբ ընդունած ըլլան իրենց գրօշին հովանուոյն ներքև ապաստանող մանր ազգերը և, հետեւաբար, իրենց կայսրութիւնները, շնչելու չափ յիմար քաղաքականութիւն մը: Պր. Էօթէն Լայմտորֆէրի գրութիւնը իր մանրամասնութեամբ ողբ մը ու էութեամբ բողոք մըն է: Կը գանգատի ու կը բողոքէ Նա ուս զինտրագրութեան կերպին, գրաքնութեան, եկեղեցւոյն և ուսուցնող գաստիաշակութեան գէմ: Եւ սակայն, առանց կէտ առ կէտ հետեւելու յօգուածին, պիտի ամփոփեմ, մէջ բերեմ այն հատուածները որոնք Ֆինլանտիոյ մտաւորական, բարոյական և հոգեւորական զգացմանց հետ կը խօսին: Համանուն Մեծ-Իրք-սութեան բնակիչները՝ մեզի բազմակից՝ կը գտնուին այսօր ճիշդ այն *regime*ին, այն կաշկանդման տակ, որոնց ներքև կը հծեն տասնեակ հազարներով Հայեր: Գրեթէ երկուք ու կէս միլիոն Ֆինլանտացիներու Հայրենիքի, լանհատական, ընկերական իրաւունքները հաւաքարայէս բռնաբարուած են հիւսիսի այդ ահռելի կենդանուոյն բարբարիկ ճիրաններուն տակ: Հոս ալ Պօպրիքօֆ մըկայ, կ'ըսէ Պր. Լայմտորֆէր, որու քաղաքականութեան շնորհիւ Ֆինլանտիա իր այսքան տարուան սահմանադրական ամեն մէկ ազատութիւն կորոյս: Գալով զինտրագրութեան ինգրոյն, յօգուածագիրը կը հաստատէ թէ՛ 20-22 տարեկան 7200 մարդ պիտի տայ Ֆինլանտիա տարին: Իւրաքանչիւր զինտր 5 տարի զինտրական ծառայութեան մէջ պիտի մնայ և 13 տարի ալ իբր պահեստի զօրք պիտի ճանչցուի: Այս հաշուով 36000 զօրք կուտայ կոր ըսելէ

Ֆինլանտիա ամեն տարի: Ատկէ զամ տարին անդամ մ'ալ 92000 մարդ վեց շաբաթ շարունակ ուղւափորձի ներկայ պիտի գտնուի: Զինտրագրութեան այս ապօրինի կերպէն բնականաբար կամաց կամաց պիտի զզուէին Ֆինլանտացիք ու, հետեւաբար, պիտի դիմէին տարագրութեան, հակառակ այնքան խստութիւններուն ու հակառակութիւններուն:

Պր. Էօթէն Լայմտորֆէր կ'ըսէ. —

«Ֆինլանտացիներ՝ Ռուսիոյ իւխանութեան ներքեւ անցնելէ առաջ՝ սարագրուիլը, գաղթելը ի՛նչէ չ'էին գիտեր: 1899ին հայրենիէն գաղթող երեսասարդներուն թիւը 16000ի կը հասնէր. 1900ին, հակառակ ամենայնպիս պատիժներով զինտրական ծառայութեանց մէջ գտնողներուն սարագրիլը ազգիլեալ ըլլալուն, գաղթողներուն թիւը 36000էն պակաս չ'էր: Հիմա 16ը անցնող ո՛ր եւ է մէկու մը՝ ինչ պարագաներու տակ ալ ըլլայ՝ երբէք հրաման չ'կայ հայրենիքը թողլու:»

Ու այդ խիստ ու զզուելի զինտրականութեան կը յաջորդէ գրաքնութիւնը. գրաքնութիւն մը որուն առնունք միայն կը բաւէ Ռուսիոյ մէջ՝ չորս դին սարսափ սիւռելու: Պր. Լայմտորֆէր գառնապէս կը գանգատի պաշտօնական և ո՛չ-պաշտօնական չըջանալիներու մէջ ուսերէն լեզուին բռնի մտցուելուն դէմ: Յարգելի յօգուածագիրը կը շարունակէ: —

«Ռուսական գրաքնութիւնը մոտ գսած է իր բոլոր սարսափներովն ու գանելի խայսառակութիւններովը: Եւ հոս ալ Կառավարչութեան աղտոտ գործը կատարելու տրամադիր՝ ուրացող Ֆինլանտացի մը գտնուեցաւ: Գրաքնիչը՝ Մերակոյսի անդամ՝ Էրժօ Քօսրնէն՝ Պօպրիքօճէն ու Բօպէյսօնուսէճէն ալ աւելի ասելի է հիմա: Տարեգումքիւնները Քօսրնէնի ըրածները կը վկայեն արդէն: 1899ին՝ իր գրաքնիչ եղած ժամանակ՝ 375 վնասակար գումարիւն-

ներ» բռնուեցան. 1900ին՝ մօսաւորապէս 1000. Մինչդեռ 1897ին եւ 1898ին երբ ինքը չ'էր այդ պաշտօնին գլուխը, բռնուած «վնասակար գուրփին» ներք 52ը չ'էր անցնել ընդամենը: Մարդասիրական, գիտական, գրական ընկերութիւններ կազմելու հրաման տուած չ'է: Քակսած է «Ֆինլանսական բժշկական ընկերութիւն»ը եւ «Ֆինլանսական Աշխարհագրական Ընկերութիւն»ը փայտայտելուն պատճառ եղած»:

*Ուայդ «ուրացող» Քօսքընէնը առանց ամչնալու. —*

«Իրեն գործած վասութիւնները կը պաշտպանէ, առարկելով որ՝ այդ ընկերութիւնները ուրիշ բանի չ'են ծառայել իսկապէս, եթէ ոչ փաղափական բարձրմանը առաջ բերելու համար բանակցելու միջոցներ, վայրեր: Իսկ Պօպրիֆօճ շատնց արդէն բոլորովին արգիլած է փաղափական կամ տնտեսական հարցերու վրայ վիճարանելու համար եղած ո՛ր եւ է ընկերական հաւաքոյք»:

Եւ ի լրումն չարեաց, ուստի ան այդ ապաւշ գրաքննութենէն անմիջապէս վերջը կուգայ մարդորսութիւնը, հաւատափոխութեան համար գործադրուած ամենավատ, ամենաստոր միջոցները: Ինչ կերպով որ ուսուցանողութիւնը բռնաբարեց մոլեռանդօրէն՝ հայ եկեղեցւոյ աւանդական միջանի արարողութիւնները, սովորութիւնները — խաչը ջրէն հանելու խրնդերը, օրինակի համար — նոյն օրէնքով եւ թերեւս աւելի գէշ տեսակէն կը վերաբերուի Ֆինլանտիոյ կրօնքին, նուիրական աւանդութիւններուն գէժ, աստուծոյ բռնի Օրթոտոքսութիւնն ընդունել տալու համար: Ֆինլանտայի կրօնական կացութիւնը այսպէս կը նկարագրէ Պր. Էօթէն Լայմօրֆէր. —

«Ռուս գիւտարականներէն, ռուս պաշտօնեաներէն ետքը կուգայ ռուս եկեղեցին: Ըստ վերջին մարդահամարին, Ֆինլանտիա 2,234,547 բողոքական եւ միայն 45000 յունադաւան բնակիչ ունի արեւելեան սահմանագլխին վրայ՝

Մեծ-Իսուփիւնը Ռուսիոյ միացնող տեղերը. ու դարձեալ ոչ-յունադաւան մը չ'կրնար ո՛ր եւ է կառավարական պաշտօնի ստանալ: Ռովինտեւ Զարի կայսրութեան մէջ կրօնք՝ ըլլա՛յ գիւտարական, ըլլա՛յ փաղափական պաշտօններու համար սիպոդակական է, ասիկա պատշաճ մը եղած է ռուս կառավարութեան շատ մը փահանաներ մտնելու ի Ֆինլանտիա եւ, հետեաբար, կառուցանելու բազմաթիւ եկեղեցիներ: Եւ չ'կայ այսօր հոն՝ քիչ շատ բազմամարդ բազ մը, որ ռուս եկեղեցի մը չ'ապրեցնէ իրեն պարպանելով մէկտեղ: Ասկէ զատ, կառավարական պաշտօնեաներուն իրաւունք տրուած է բռնի կերպով վնասել յայնու ծախքերը այն եկեղեցիներուն, որոնց չ'են պատկանիր իրենք: Մինչդեռ՝ շատ անգամ՝ 10-12 հոգի հազիւ կը տեսնես հոն»:

*Բայց շուտացի մարդասէր Յօգուածագրին վերջին տողերն են աւելի որ մեր սրտի մեր զգացման թելերուն կը դպչին ուղղակի: Պր. Էօթէն Լայմօրֆէր կողմէն հոն՝ Ֆինլանտիոյ դրոյքայիններուն վիճակին վրայ. . . Ընթերցողները Հիւսիսային Արշը իրեն դազանութեան գաղաթնակէտը պիտի հասած գտնեն այն գործին մէջ, որուն միակ նպատակն է ռուսացնել: Ամեն Հայ յուզուած պիտի կարգայ այս տողերը, երբ անանցմով մեր ուստահայ այնքան թեմական, ոչ-թեմական դրոյքայիններուն փակուիլը, անոնց ինչքերուն գրաւումը, այդ նուիրական շէնքերէն մայրենի լեզուին արտաքսուիլը — եթէ մոռցած է — վերջիչէ: Համակրելի յօդուածագրին տողերը կը թարգմանեն այսպէս իր սրտին յուզմունքը. —*

«Բարձրագոյն դպրոցներու մէջ Ֆինլանսական եւ շուտական լեզուաց եւ անոնց գրականութեան ուսուցման համար որոշուած շաբաթական 12 ժամը 5ի իջած է: Ռուսերէնը որ ուսանողին համար կամայական լեզու մըն էր, սիպոդակական, պատշաճօրէն եղած է այժմ եւ աւակերտը շաբաթական տասը

ժամէն անելի պիտի զոհէ անոր: Առաջ-  
ուան օտար լեզուներու, ընդհանուր  
պատմութեան եւ գիտութեան համար  
որոշուած ժամերը՝ հիմա Ռուսիոյ  
պատմութեան, Ռուսիոյ աշխարհագր-  
ութեան եւ ռուս կրօնքին ուսուցման  
յասկացուած են մոլեռանդապէս: Ա-  
սոնք ամենը բնականաբար մէկ նշա-  
նակութիւն միայն ունին. — Ֆինլան-  
սայի Երիտասարդութիւնը բռնի կերպով  
*ռուսացնել*: Ֆինլանտական եւ շուե-  
տական լեզուները որոցմով Հէլսնկ-  
ճօրի համալսարանին մէջ բանասո-  
սութիւններ կ'ըլլային, կառավարա-  
կան հրովարտակի մը համաձայն, 1901  
ին վերջերը բոլորովին պիտի դադրին  
յիշեալ համալսարանին մէջ գոյութիւն  
ունենալէ: Ռուսերէնը պիտի ըլլայ  
պատմական լեզուն, եւ, այն դասա-  
սուները — որ շատ քիչ են — որ կա-  
րող են ռուսերէն լեզուով դասախօսե-  
լու՝ պիտի մնան, մնացեալները իբրեւ  
անկառող պիտի հեռացուին իրենց  
պատմութիւնէն:»

\*\*\*  
Ռուսական Մերակոյտին գործա-  
կատար՝ Պր. Բօպէյտոնոսձէֆ վերջերս՝  
կէս-պաշտօնական կերպով՝ North A-  
merican Reviewի մեջ հերքեց ռուս կա-  
ռավարութեան դատարարական  
նկատմամբ բռնած քաղաքականութեան  
դէմ գրուած յօդուած մը, «Ռուսիան եւ  
ժողովրդական Դատարարականութիւնը»  
վերնագրին տակ: Յօդուածագիրը  
որուն դէմ ռուս կառավարութիւնը  
պաշտպանել կարճեց Մերակոյտի գոր-  
ծակատարը, Իշխան Քրօբօթքին էր:  
Պր. Բօպէյտոնոսձէֆ կրնայ պաշտպա-  
նել ինքզինք, իր ներկայացուցած կա-  
ռավարութիւնը, բայց Իշխան Քրօբօթ-  
քինի, Պր. Էօֆէն Լայմտորֆերի գրած-  
ները այնքան արդարացի, այնքան  
ճշմարիտ են, որչափ Ռուսիոյ վար-  
մունքը, բռնած ընթացքը իր գրօշին  
տակ ազատամտողներուն դէմ՝ դազա-  
նային ու ակզակարծան:

ՎԱՀԷ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅՈՅ ՀԱՐՅՐ

Ծ Ր Ա Գ Ի Ր

1. ԾԱՆՈՒՅՈՒՄ «Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան»:
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՋԱԲԱՆ:
3. ԿՈՉԵՐ Նշանաւոր Եւրոպացիների, յօգրոս հայերի եւ հայոց հարցի լուծման:
4. ԱՆՆԱՐԿ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ:  
ա) Հայերի դերը նախաբիսանդական եւ բիսանդական Երջանում. բ) Հայերի կոչիր ֆաղափական հարեւանների հետ. գ) Կրօն-եկեղեցի. դ) Հայկական իրաւունք:
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ.  
ա) Քաղաքական (հին եւ այժմեան). բ) Նկարագրական: գ) Հայերի թիւը (ուսումնասիրութիւն). դ) Դրացի ազգեր:
6. ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ. — ՀՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ (հայկական բեւեռագրեր): Հայկական գեղարուեստ, նարսարապետութիւն:
7. ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԼԵԶՈՒ.  
ա) Հին մասնագրութիւն. բ) Նոր գրականութիւն. գ) Կովկասեան եւ թիւրքահայերի մամուլի պատմութիւն:
8. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՅՐ եւ նրա պատմական տեսութիւնը:
9. ՀԱՅՈՅ ՀԱՐՅՐ.  
ա) Հայերի ֆաղափական շարժումը թիւրքիայում. բ) Թիւրքահայերի տեսական կեանքը. գ) 1850-1900 (պատմական ֆննդատարութիւն): դ) Ապստամբութեան Երջանը. յեղափոխութեան գլխաւոր մօտէններ (պատմական ակնարկ): ե) Կոստանդնուք: գ) Հայոց հարցը Եւրոպական դիպլոմատիայի առաջ.  
ա) Պարիզի կօնգրէս. բ) Սան-Ստեփանո. գ) Բերլինի կօնգրէս. դ) 1895-ի ծրագիր. ե) Պատմական ակտեր: է) Թիւրք կառավարութեան վերաբերմունքը դէպի հայկական դասը (Թանգիւնսք

— Խաբըր Հիւմայուն եւ այլ կարգա-  
դրութիւններ):

10. ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ.  
ա) Գրողներ. բ) Պետական գործողներ.  
գ) Միսիօնարներ. դ) Ճանապարհորդներ.  
ե) Նորագոյն հայասերներ (փաղածֆ-  
ներ):

11. ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ. նրանց  
կասարած դերը 19 — րդ դարու սկզբում.  
Զինուորականներ:

12. ԿՈՎԿԱՍՏԱՆ ՀԱՅԵՐԸ.

13. ԱԿՆԱՐԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻ ՀԱՅԵ-  
ՐԻ ՄԱՍԻՆ:

14. ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐ (Բալկան, Ե-  
գիպսոս, Ամերիկա, Հնդկաստան, Լե-  
հաստան):

15. ԿԵՆՍՍՊՐՍԿԱՆ (Նեանաուր հա-  
յերի եւ հայասեր եւրոպացիների):

16. ԹԻՒՐԿԱՍ ԼԾԻՑ ԱԶԱՍԱԳՐԻԱԾ  
ԵՐԿԻՐՆԵՐ (սպասութեան պատմութիւն  
— Յունաստան, Բուլղարիա, Ռումանիա,  
Սերբիա, Կրետէ):

17. ՏԵՍԱՐԱՆՆԵՐ. Նկարներ: Լու-

սանկարներ: Հայաստանի փարէզ:

18. ՀԱՅԵՐԻ ԱՊԱԳԱՑ ԴԵՐԸ ՓՈՔՐ  
ԱՍԻԱՅՈՒՄ:

ԼԻԱԶՈՐ ԿՕՄԻՏԷ

## ԴԵՂԱՐԱՆ

# ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Յոյն միամեայ հաստատութիւնը  
վերջերս աւելի ճոխացուցած ենք բե-  
րել տալով եւրոպական ամեն տեսակ  
քնտիր դեղորայք, սրեսխաշիթէնէր եւ  
հանքային թարմ ջուրեր:

Յաճախորդները կրնան ապահով  
ըլլալ դեղերուն ինամեալ եւ արագ  
պատրաստութեան ու գիներու չափա-  
ւորութեան մասին:

Դեղարանս կը յաճախեն Հայ եւ  
օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս  
նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու  
փորձ մանկաբարձներ:

## SALAMANDER

### ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն  
ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

## L'ALLIANCE

### Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ըն-  
կերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ

Յմեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս  
նաև Ծովային, Գետային եւ Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի գներ եւ պայմաններ

Դիւնը առ Ընդհանուր Գործակալ եւ Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆԱՆ

Աղեփասնորիա, պզտիկ Մեհշիե Ապուսուրսա փողոց թիւ 10